

ՌԱԿ. Գերագոյն խորհրդի նախագահ Վարդան Նազիրեանը հանդիպել է Արցախի նախագահ Բակօ Մահակեանի հետ

Արցախի Հանրապետութեան Նախագահ Բակօ Մահակեանը Մայիս 22-ին ընդունել է Ռամկավար Ագատական կուսակցութեան գերագոյն խորհրդի Նախագահ Վարդան Նազիրեանին:



Հանդիպմանը քննարկուել են արտաքին եւ ներքին քաղաքականութեանն ու Արցախի սոցիալ-տնտեսական զարգացմանն առնչուող մի շարք հարցեր:

Նախագահը կարեւորել է աւանդական կուսակցութիւնների հետ մշտական երկխօսութեան ամրապնդումը՝ այն համարելով Հայրենիք-Սփիւռք կապերի գործնական դրսեւորումներից մէկը:

Սփիւռքի Նախարարութիւնը Կ'ընդունի Թէքէեան Մշակութային Միութեան Կեդրոնական Վարչութեան Պատուիրակութիւնը

Ուրբաթ, Մայիս 18-ին, սփիւռքի նորանշակեան նախարարը՝ Մխիթար Հայրապետեան իր պաշտօնավայրին մէջ ընդունեց Թէքէեան Մշակութային Միութեան Ամերիկայի եւ Քանատայի Կեդրոնական Վարչութեան պատուիրակութիւնը, որ կը բաղկանար Երուանդ Ագատեանէ, Յակոբ Վարդիվառեանէ եւ Գեորգ Մարաշլեանէ:



Նախագահ Արմէն Սարգիսեան Ընդունեց ՌԱԿ.ի Պատուիրակութիւնը

Երկուշաբթի 21 Մայիսին Նախագահ Արմէն Սարգիսեան իր պաշտօնավայրին մէջ ընդունեց ՌԱԿ Կեդրոնական Վարչութեան եւ Գերագոյն Խորհուրդին պատուիրակութիւնը:



Աւելի քան կէս ժամուայ ընթացքին քննարկուեցան կարգ մը կենսական հարցեր որոնք կը շահագրգռեն որքան հայրենի ժողովուրդը, նոյնքան նաեւ սփիւռքահայութիւնը, Թաւշեայ յեղափոխութեան ընծայած պայմաններուն ներքեւ: Ընդհանրապէս դրական էին դատումները եւ դիտումները:

Յատկապէս քննութեան տակ առնուեցան հաւանական մօտակայ ընտրութիւններուն կարելիութիւնը, հայրենադարձութեան խնդիրը, տնտեսական ներդրումներու երաշխաւորութեան պարագան, ինչպէս նաեւ Սփիւռք-Հայրենիք յարաբերութեանց նոր ծիրը:

Պատուիրակութեան մաս կը կազմէին Ընկեր Վարդան Նազիրեան (Ատենապետ Գերագոյն Խորհուրդին), Յակոբ Աւետիքեան (Ատենապետ Կեդրոնական Վարչութեան), Երուանդ Ագատեան, Յակոբ Վարդիվառեան, Գեորգ Մարաշլեան, Արմէն Մանուկեան, Խորէն Քալինեան, Էտուարդ Մանուկեան եւ Կարէն Կակոյեան:

Պատուիրակութեան անդամները ջերմօրէն շնորհաւորեցին երիտասարդ նախարարը եւ զեկուցեցին անոր Միութեան ընդարձակ ծրագիրներուն մասին՝ Հայաստանի մէջ թէ Սփիւռքի տարածքին:

Խորհրդակցութիւնը կայացաւ նաեւ Սփիւռքի նախարարութեան անցեալի գործունէութեան եւ ապագայ ծրագիրներուն շուրջ: Յատկապէս քննարկուեցան հայրենադարձութեան հնարաւորութիւններն ու հաւանական ծրագիրները:

Շնորհիւ նախարարին ջերմ եւ անմիջական բնաւորութեան՝ հանդիպումը կայացաւ արտակարգօրէն ջերմ եւ գործնական մթնոլորտի մէջ:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 100 ԱՄԵԱԿ



Մարդարապատի հերոսամարտի 100 ամեակին առթիւ, 450 երիտասարդներ միացան Ռամկավար Ագատական Կուսակցութեան շարքերը, ուխտելով քալել մեր հերոսներու ճանապարհով:



ΑΝΑΚΟΙΝΩΣΗ ΓΙΑ ΤΙΣ ΕΓΓΡΑΦΕΣ ΜΑΘΗΤΩΝ

Αγαπητοί Γονείς,
Σας ενημερώνουμε ότι οι εγγραφές των μαθητών για τη νέα σχολική χρονιά 2018-2019, αρχίζουν την 1η Ιουνίου 2018 και θα ολοκληρωθούν στις 21 Ιουνίου 2018. Πιο συγκεκριμένα, για τους μαθητές που θα φοιτήσουν στο *Νηπιαγωγείο* και την *Α' τάξη Δημοτικού* οι εγγραφές ξεκινούν από την 1η Μαΐου 2018.

- Δικαίωμα εγγραφής έχουν:
1. Στο *Νηπιαγωγείο*, τα παιδιά που γεννήθηκαν το 2013 (νήπια) και 2014 (προνήπια).
 2. Στην *Α' τάξη του Δημοτικού*, τα παιδιά που γεννήθηκαν το 2012.
 3. Η εγγραφή στις υπόλοιπες τάξεις γίνεται με το συνηθισμένο τρόπο.
 4. Για τις εγγραφές στο *Νηπιαγωγείο* και στην *Α' τάξη Δημοτικού*, χρειάζονται πιστοποιητικά για τα οποία θα ενημερωθείτε από τη Διεύθυνση του Σχολείου.

Παρακαλούμε για την έγκαιρη τακτοποίηση των εγγραφών των παιδιών σας.
Θα τηρηθεί αυστηρά σειρά προτεραιότητας όσον αφορά τις θέσεις των μαθητών στα σχολικά λεωφορεία. Η άμεση ανταπόκριση όλων, βοηθά στην ομαλή λειτουργία του Σχολείου και στην εξασφάλιση των μεταφορικών μέσων.
Στοιχεία επικοινωνίας
*Τηλ. Σχολείου: 210- 9816679 (πληροφορίες: Μπεναρδή Μαρία-Ελένη)
*Τηλ. Γραμματείας: 210- 9825685

Επισκεφθείτε την ιστοσελίδα του Σχολείου μας για περισσότερες πληροφορίες!

www.agbuathens-artakikalpakianschool.gr

Διευθύντρια
Μαρία-Ελένη Μπεναρδή

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ Հ.Բ.Ը.Մ. «Ա. ԳԱԼՓԱՔԵԱՆ» ՎԱՐՃԱՐԱՆԻ

Միբելի Օնոթ,
Կը տեղեկացնենք թէ 2018-2019 դպրոցական տարեշրջանի արձանագրութիւնները, պիտի կատարուին Յունիս 1-էն մինչեւ 21 Յունիս 2018-ին: Յատկապէս Մանկապարտէզի եւ Ա. դասարանի աշակերտներուն համար, պիտի կատարուին Մայիս 1-էն:

- Արձանագրութեան իրաւունք ունին.-
1. Մանկապարտէզ, այն երեխաները որ ծնած են 2013-ին (Օտայիկ) եւ 2014-ին (Կոկոն):
 2. Ա. դասարան, այն երեխաները որ ծնած են 2012-ին:
 3. Մնացեալ դասարաններու աշակերտներուն համար, արձանագրութիւնները կ'ըլլան սովորական ձեւով:
 4. Մանկապարտէզի եւ Ա. դասարանի արձանագրութեան, հարկ եղած հաստատագիրներուն համար, կրնաք իմանալ տնօրէնութենէն:

Կը խնդրուի արձանագրութիւնները կատարել վերոյիշեալ ժամանակամիջոցին մէջ:
Ձեր անմիջական կապակցութիւնը Տնօրէնութեան հետ, անհրաժեշտ է, ապահովելու համար յառաջիկայ դպրոցական տարեշրջանի դպրոցի հեզասահ գործունէութիւնը, ինչպէս նաեւ դպրոցական ինքնաշարժերու կարգաւորումը:
Ձեր ուշադրութեան կը յանձնենք, թէ աշակերտներու տեղերը ինքնաշարժերու մէջ պիտի ապահովուին, ըստ արձանագրութեան թուականին:

Հեռաձայններ.- Տնօրէնութիւն՝ 210-9816679
Հ.Բ.Ը.Մ. Քարտուղարութիւն՝ 210-9825685
Տնօրէնութիւն

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



Հունահայոց Թեմի Առաջնորդական տեղապահ Տ. Խորեն Կրդ Առաքելյանը Թեմական խորհրդի փոխատենապետ Տիար Մերուժան Հարթենյանի ուղեկցությամբ ներկա գտնվեց Աթենքի Բյուզանդական Քրիստոնեական Թանգարանում Հիսուս Քրիստոսի Մուրբ Գերեզմանի նորոգման աշխատանքներն ու պատմությունը ներկայացնող ցուցահանդեսին: Ցուցահանդեսը բացվեց Աթենքի և համայն հունաց Արքեպիսկոպոս Տ. Տ. Հիերոնիմոս Արքեպիսկոպոսի և Հունաստանի Հանրապետության նախագահ Տիար Պրոկոպիս Պավլոպուլոսի բարձր հովհանու ներքո:

Համանախագահները Յունիսին պիտի հանդիպին Հայաստանի նոր ղեկավարութեան հետ

Մինսկի խումբի համանախագահները կ'ակնկալեն Հայաստանի նոր ղեկավարութեան հետ հանդիպիլ Յունիսին: Այս մասին կը տեղեկացնէ ԵԱՀԿ-ի լրատուական ծառայութիւնը:
Մինսկի խումբի համանախագահները, Մայիս 15-ին, հանդիպում մը ունեցած էին Ատրպէյճանի արտաքին գործոց նախարար Էլմար Մամետեարովի հետ, քննելու համար Արցախի հակամարտութեան լուծում մը գտնելու շուրջ բանակցութիւններուն վերսկսելու կարելիութիւնները:



Ռամկավար Ազատական Կուսակցության յաղթական փառաւոր երթը Սարդարապատի 100-ամեակի առիթով 450 երիտասարդներ կը միանան կուսակցության շարքերուն պատմական յուշարձանին առջև

Սարդարապատի յաղթական հերոսամարտի 100-րդ տարեդարձին առիթով, Հայաստանակեդրոն Ռամկավար Ազատական Կուսակցության Կեդրոնական Վարչության նախաձեռնությամբ տեղի ունեցաւ ՌԱԿ երիտասարդական համահայաստանեան 2-րդ հաւաքը: Հայաստանի տարբեր շրջաններէն յատուկ օթոպիսներով բազմահարիւր երիտասարդներ եւ տարբեր ակումբներու ղեկավարներ Մայիս 20, Կիրակի օր առաւօտուն հաւաքուեցան Սարդարապատի պատմական յուշահամալիրին մէջ:

Պատմական եւ բացառիկ այս տօնակատարութեան կեդրոնական երեւոյթը շուրջ 450 խանդավառ երիտասարդներու միանալն էր Ռամկավար Ազատական Կուսակցության շարքերուն:

Այս առիթով ներկայ էին ՌԱԿ Գերագոյն Խորհուրդի անդամներ գլխավորութեամբ Խորհուրդի Նախագահ Վարդան Նազիրեանի եւ անդամներէն Երուանդ Ազատեան, Յակոբ Վարդիվառեան, Գեւորգ Մարաշլեան եւ Վարդգէս Գուրուեան: Նոյնպէս ներկայ էին ՌԱԿ Կեդրոնական Վարչության անդամներ գլխավորութեամբ Կ. Վ. Նախագահ Յակոբ Աւետիքեանի:

Երդմնատութեան յուզիչ եւ տպաւորիչ այս արարողութեան բացումը կատարեց եւ ամբողջ յայտագիրը վարեց ՌԱԿ Արմավիրի երիտասարդական ակումբի շնորհալի ատենապետուհի Օմէնի Աւետիսեանը գործակցութեամբ Վանաձորի մարզային կառոյցի ներկայացուցիչ Անդրանիկ Մուրէնեանի, որ ունեցաւ տպաւորիչ ելոյթ մը:

Այս առիթով ողջոյնի իր խօսքը կատարեց ՌԱԿ Գերագոյն Խորհուրդի անդամ եւ ԱՄՆ-ի եւ Գանատայի Թէքէեան Մշակութային Միութեան Կ. Վարչութեան նախագահ Երուանդ Ազատեանը, որ յիշատակեց Սարդարապատի հերոսամարտին կենսական եւ առանցքային դերն ու նշանակութիւնը հայ ժողովուրդի պատմութեան մէջ եւ յաղթանակի իրականացման մէջ Ռամկավար Ազատական Կուսակցութեան ունեցած անուրանալի դերը: Ազատեան իր ոգեշունչ խօսքին մէջ նշեց մասնաւորապէս, թէ «Սարդարապատը յուշարձան չէ, ան քար ու ծառ չէ, Սարդարապատը արիւն է:

Այսօր մենք կանգնած ենք 100 տարի առաջ Սարդարապատի հերոսամարտի նահատակներուն արեան վրայ: Կուզեմ, որ գիտակցիք այդ մասին, քանի որ մենք այդ արիւնը վերածեցինք կեանքի: 100 տարի առաջ այստեղի թափուած արիւնին շնորհիւ է որ այսօր մենք ունենք անկախ հայրենիք եւ այդ իրագործման մէջ իր դերը ունեցած է Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը: Այսօր մենք կը խոնարհինք այդ արեան առջեւ, կը խոնարհինք այդ հերոսներուն առջեւ, որ թափած են այդ արիւնը, կը խոնարհինք որպէսզի դուք երիտասարդներդ, կանգնիք հպարտօրէն այս յուշարձանին առջեւ եւ ուխտէք անոնց անունով, որ 100 եւ 1000 տարի եւս մեր հայրենիքը շարունակէ իր գոյութիւնը:

Մեր հայրենիքը պիտի գոյատեւէ, քանի որ մենք կ'ուխտենք մեր հերոսներուն արեան գնով, որ հայը ապրելու իրաւունք ունեցող ժողովուրդ է:

Միւրեւի երիտասարդներ, դուք Սարդարապատի ժառանգորդ սերունդն էք, պէտք է երկար ապրիք որպէսզի երկար ապրի մեր հայրենիքը:



Սարդարապատի 100 ամեակի պաշտօնական այս տօնակատարութիւնը նաեւ առիթը հանդիսացաւ բազմահարիւր երիտասարդներու կուսակցութեան միանալու երդմնատութեան հանդիսաւոր արարողութեան: Շուրջ 450 նորագիր երիտասարդներու երդման արարողութիւնը կատարեցին միասնաբար, Վարդան Նազիրեանը, Երուանդ Ազատեանը եւ Վարդգէս Գուրուեանը:

Ապա՝ ելոյթ ունեցաւ ՌԱԿ Գերագոյն Խորհուրդի նախագահ Վարդան Նազիրեանը: Ընկեր Նազիրեան իր խօսքին մէջ ընդգծեց երիտասարդութեան կարեւոր եւ առանցքային դերը Հայաստանի ներկային եւ ապագային կերտման գործին մէջ եւ ստորագծեց երիտասարդական ոյժին եւ եռանդին կարեւորութիւնը Հայաստանի զարգացման եւ աւելի եւս շէնցնելու աշխատանքին մէջ:

Վարդան Նազիրեան նշեց, որ այսուհետեւ կուսակցութեան վարչական պաշտօններուն մէջ տեղ պէտք է գրաւեն նաեւ երիտասարդները: Ան աւելցուց, թէ սերնդափոխութիւնը յեղափոխութիւն չէ եւ թէ սերնդափոխութեան ժամանակ պէտք է միշտ յիշել կուսակցութեան աւագ ընկերներուն գոհաբերութիւնները եւ անոնց տարած շնորհակալ աշխատանքը:

«Մեր կուսակցութեան նախաբանն է ժողովուրդին, ժողովրդով, ժողովուրդին համար: Այժմ կ'ուզեմ յայտարարել, որ այսուհետեւ մեր նախաբանը ըլլայ, երիտասարդներուն, երիտասարդներով, երիտասարդ Հայաստանին համար: Կեցցէք բոլորդ: Շուտով զօրանանք այնքան որ անցնինք Արաքսի միւս ափին եւ Արարատը դիտենք միւս կողմէն: Գալ տարի հանդիպինք Վանի մէջ...», շեշտեց Վարդան Նազիրեանը:

Այս տօնակալ առիթով ՌԱԿ ատենապետը 2018 թուականը յայտարարեց երիտասարդութեան տարի: Նոյնպէս ՌԱԿ Գերագոյն Խորհուրդի եւ Կեդրոնական Վարչութեան անունով ընկեր Նազիրեանը յայտարարեց, թէ մեր կուսակցութիւնը պիտի մասնակցի յառաջիկայ Ազգային Ժողովի ընտրութիւններուն:

Այս հրաշալի ձեռնարկին ընթացքին ելոյթ ունեցաւ նաեւ ընկեր Վարդգէս Գուրուեանը, որ իր կարգին շեշտը դրաւ կուսակցական գործունէութեան մէջ երիտասարդներու ստանձնելիք դերին կարեւորութիւնը:

Օրուան տօնակալ մթնոլորտը շեշտուեցաւ շնորհիւ շնորհալի եւ տաղանդաւոր կուսակցականներու կողմէ գործադրուած ազգային պարերուն, երգերուն եւ երաժշտական խանդավառ ելոյթներուն:

Ռամկավար երիտասարդները եւ հիւրերը այս առիթով այցելեցին Սարդարապատի համալիրին մաս կազմող Հայոց ազգագրութեան եւ ազատագրութեան պաշարի պատմութեան ազգային թանգարանը եւ ծանօթացան Հայոց Ազգային Մշակոյթի եւ Մայիսեան հերոսամարտերու պատմութեան նուիրուած ցուցադրութիւններուն:



Թեքեան մրցանակակիրները յայտնի են

Մայիսի 17-ին անցկացուեց Թեքեան մշակութային միության հերթական «Վահան Թեքեան» մրցանակաբաշխությունը, որ հովանաւորուում է Շաքէ Ղազարեան հիմնադրամի կողմից: Միութիւնն ամէն տարի գնահատում և խրախուսում է մշակութային ոլորտի լուսագոյններին: Իր գործունէութեան ընթացքում Թեքեան մշակութային միութիւնը մրցանակներ է յանձնել մշակութային ոլորտի աւելի քան 100 արժանաւորների, այդ թուում նաև շատ անուանի մարդկանց:

Թեքեան մշակութային միության նախագահ Ռուբէն Միրզախանեանը յայտարարելով մրցանակակիրներին շնորհաւորեց նրանց և շնորհակալութիւն յայտնեց մասնագիտական յանձնախմբերի ղեկավարներին:

Գրականութիւն անուանակարգում մրցանակը շնորհուեց Բանաստեղծ Մանուէլ Միկոյեանին «Մտուերներից անդին» բանաստեղծական ժողովածուի համար: Մ. Միկոյեանին մրցանակը յանձնեց ՀՀ ԳԱԱ արտասահմանեան անդամ Երուանդ Ազատեանը՝ ասելով. «Մտուերներից անդին գիրքը մեր օրերում մարդու համամարդկային խոհերը կրնորոշէ» և որ բանաստեղծը նաև «դատարկուող հայրենիքի մղձաւանջի շրջագծի մէջ է արտայայտում իր բանաստեղծական մտահոգութիւնը»: Ե. Ազատեանը նկատեց, որ Մ. Միկոյեանը Չահրատի նման կարողանում է բանաստեղծօրէն ներկայացնել կեանքի ընթացքի երևոյթները և սեւակեան շնչով հանդէս գալ տիեզերական բարդ ընդհանրացումներով:

Թատերական արուեստ անուանակարգում մրցանակը տրուեց Գիւմրի Վարդան Աճեմեանի անուան պետական թատրոնին՝ Գաբրիէլ Գարսիա Մարկեսի «Երկնագոյն շան աչքերը» ներկայացման համար:

Յանձնաժողովի նախագահ Արմէն Էլբակեանը նկատեց՝ որքան բարդ է Մարկեսի արձակը, նոյնքան բարդ է նրա արձակ գործերի բեմադրումը: Մակայն երիտասարդներին յաջողուել է ներկայացնել Մարկեսեան, «սեւ ու սպիտակի աշխարհը, սուր, լակոնիկ միջավայրը», ուր դժուար է որոշել պատրանքի և իրականութեան սահմանագիծը:

Երաժշտութեան ոլորտում մրցանակը տրուեց Էդուարդ Թոփչեանին 2017 թուականի գործունէութեան համար: «Ազգ» թերթի գլխաւոր խմբագիր Յակոբ Աւետիքեանը մրցոյթը համարեց ոչ սովորական երևոյթ, մրցանակն էլ տարիների վաստակի գնահատական, կուտակումների հանգրուան, թէն՝ մի քիչ ուշացած: Նա ընդգծեց, որ Է. Թոփչեանի շնորհիւ Երևանը դարձել է երաժշտութեան մայրաքաղաք:

«Ինձ համար կարևոր է, որ ես երաժշտութեան մի մասնիկն եմ, այլ ոչ թէ երաժշտական խմբի ղեկավար, -ասաց



Հայաստանի

սիմֆոնիկ նուագախմբի դիրիժոր Էդուարդ Թոփչեանը, - և հաճելի է ստանալ այսքան պատուաբեր մրցանակ:

Վերպարուեստ և քանդակ անուանակարգում մասնագիտական խմբի աչքից չէր վրիպել ՀՊՄՀ դոցենտ Միսաք Մելքոնեանի «Ձութակահարը» քանդակը: Արուեստաբանութեան դոկտոր Հրավարդ Յակոբեանը արժևորեց հեղինակի այս և «Հայրենիք» աշխատանքները կանգ առնելով «Ձութակահարը» սեղծագործութեան վրայ. «Ձութակահարը» աշխատանքում հեղինակն ուզում է դիտողին մոռացնել տալ շրջապատը, որ նա մնայ միայն երաժշտութեան մէջ:

Բոլոր մրցանակակիրները շնորհակալութիւն յայտնեցին իրենց աշխատանքները բարձր գնահատելու և մեծանուն բանաստեղծ Վահան Թեքեանի անուան մրցանակներ ստանալու պատուին արժանացնելու համար:

Միլվա ԱՍՐԵԱՆ

Կարօ Փայլան Պիտի Մասնակցի Թուրքիոյ Խորհրդարանական Ընտրութիւններուն

Թուրքիոյ խորհրդարանի հայ պատգամաւոր Կարօ Փայլան Յունիս 24-ին կայանալիք խորհրդարանական ընտրութիւններուն կրկին պիտի առաջադրուի քրտամէտ Ժողովուրդներու ժողովրդավարական կուսակցութեան կողմէ: Ինչպէս կը հաղորդէ «Արմենփրես»-ը, թրքա-կան Mezopotamya Ajansi գործակալութիւնը կը յայտնէ, որ Փայլան կրկին ներառուած է քրտամէտ կուսակցութեան թեկնածուներու ցուցակին մէջ:



Ի տարբերութիւն, սակայն, 2015 թուականի խորհրդարանական ընտրութիւններուն, երբ Փայլան առաջադրուած էր Պոլիսէն, այս անգամ անոր թեկնածութիւնը պիտի առաջադրուի Տիարպեքիի մէջ:

Կարօ Փայլան պատգամաւոր ընտրուելէ ետք յայտնի դարձաւ Թուրքիոյ խորհրդարանին մէջ ունեցած իր համարձակ ելոյթներով: Անոնցմով ան բազմաթիւ անգամներ բարձրաձայնած է Հայոց ցեղասպանութեան հարցը՝ կոչ ընելով իշխանութիւններուն առերեսուելու սեփական պատմութեանն ու ընդունելու սեփական յանցանքը: Պատգամաւորը նոյնիսկ համապատասխան առաջարկ ներկայացուցած էր, որով կը նախատեսուէր 1915 թուականի դէպքերը պաշտօնապէս ճանչնալ որպէս ցեղասպանութիւն: Առաջարկը, սակայն, մերժուած էր: Ան նաեւ պարբերաբար բարձրաձայնած է պոլսահայ համայնքին յուզող հարցերը, մասնաւորապէս Պոլսոյ Հայոց պատրիարք ընտրելու անհրաժեշտութեան հարցը:

Խորհրդարանի ամպիոնէն ցեղասպանութեան մասին խօսելու համար ան նոյնիսկ ենթարկուած է կարգապահական տոյժի: Բացի այդ, օրերս յայտնի դարձաւ, որ անոր դէմ քրեական օրէնագիրքի տիրահոշակ 301-րդ յօդուածով հետաքննութիւն սկսած է: Հետաքննութեան ծիրէն ներս կազմուած է անոր անձեռնմխելիութենէ զրկելու պահանջագիր:

Նախորդ՝ 2015 թուականի Նոյեմբերին տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւններու արդիւնքով թրքական խորհրդարանը ունէր 3 հայ պատգամաւոր՝ Կարօ Փայլանը, քեմալական Հանրապետական ժողովրդական կուսակցութեան կողմէ առաջադրուած իրաւաբան Մելիսա Տոդանը եւ իշխող «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութեան կողմէ առաջադրուած հայ լրագրող Մարգար Եսայեանը:

Յունիս 24-ի ընտրութիւններուն ընդառաջ Հանրապետական ժողովրդական կուսակցութիւնը հրապարակած էր իր թեկնածուներու ցուցակը, ուր չկայ Մելիսա Տոդանի անունը:

Իսկ Մարգար Եսայեանի առաջադրման մասին յայտնի պիտի ըլլայ, երբ իշխող կուսակցութեան կողմէ ցուցակները հրապարակուին:

Թուրքիոյ մէջ Յունիս 24-ին տեղի պիտի ունենան արտահերթ նախագահական ու խորհրդարանական ընտրութիւններ: Ընտրութիւններէն ետք երկրի մէջ կառավարման խորհրդարանական համակարգէն պիտի անցին նախագահական համակարգի:

Նոր խորհրդարանը պիտի ունենայ 600 պատգամաւորներ, նախկին 550-ի փոխարէն:

Նախագահական Նստավայրին Մեջ Տեղի Ունեցաւ ՀՀ կառավարութեան անդամներու երդման արարողութիւն



Նախագահական նստավայրին մէջ, ՀՀ նախագահ Արմէն Սարգսեանի ներկայութեամբ, Մայիս 21-ին Հայաստանի պատմութեան մէջ առաջին անգամ տեղի ունեցած է ՀՀ կառավարութեան անդամներու երդման արարողութիւնը:

Ինչպէս կը փոխանցէ «Արմէնփրես»-ը, Հայաստանի Հանրապետութեան նախագահի աշխատակազմի հասարակայնութեան եւ տեղեկատուութեան միջոցներու հետ կապերու վարչութենէն կը տեղեկացնեն, որ ամպիոնին առաջինը մտնեցած է վարչապետ Նիկոլ Փաշինեան՝ ընթերցելով երդման գիրքը. «Յանուն համազգային նպատակներու իրականացման եւ հայրենիքի հզօրացման՝ կ'երդնում բարեխղճօրէն կատարել ժողովուրդի առջեւ ունեցած պարտաւորութիւններս, պահպանել Հայաստանի Հանրապետութեան սահմանադրութիւնը եւ օրէնքները, նպաստել Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխանութեան եւ շահերու պահպանման, հաւատարիմ մնալ կառավարութեան անդամի բարձր կոչումին»:

Այնուհետեւ հերթով տեղի ունեցաւ կառավարութեան միւս անդամներու երդմանակալութիւնը:

Երդման արարողութեան աւարտին նախագահ Արմէն Սարգսեան շնորհաւորեց վարչապետին եւ կառավարութեան անդամներուն՝ մաղթելով անոնց բեղմնաւոր ու արգասաբեր աշխատանք՝ ի շահ հայրենիքին եւ ժողովուրդին:

Կառավարութեան երդմանակալութիւնը նորամուծութիւն է Հայաստանի քաղաքական եւ պետական կառավարման մշակոյթին մէջ:

Աւստրալիոյ Ռայտ Քաղաքը Արցախի Հանրապետութեան Անկախութեան Սատարող Բանաձեւ Ընդունած է

Աւստրալիոյ Ռայտ քաղաքի քաղաքային խորհուրդը, Մայիս 22-ին, միաձայն ընդունած է բանաձեւ՝ ի սատարումն Արցախի Հանրապետութեան անկախութեան: Բանաձեւին մէջ, քաղաքային խորհուրդը կոչ



ըրած է կեդրոնական կառավարութեան՝ պաշտօնապէս ճանչնալու Արցախի Հանրապետութեան անկախութիւնը եւ ամրապնդելու Աւստրալիոյ յարաբերութիւնները Արցախի ու անոր քաղաքացիներուն հետ:

Այս մասին կը տեղեկացնեն ԱՀ արտաքին գործոց նախարարութեան տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վարչութենէն:

Եօթը տարուան փոխարէն 7 օրուան ընթացքին.

Արմէն Սարգսեան՝ մարդոց մէջ քաղաքացի ըլլալու զգացումը արթնցնելու մասին

Հայաստանը փոքր պետութիւն է, բայց համաշխարհային ազգ, հետեւաբար պէտք չէ անտեսել ստեղծուած հնարաւորութիւնը հայութեան ներուժը Հայաստանին ծառայեցնելու համար: Ըստ Armenpress.am-ի այսպիսի տեսակէտ արտայայտած է ՀՀ նախագահ Արմէն Սարգսեան, Մայիս 20



յոյս 21-ին ուղիղ տեսակապով ելոյթ ունենալով Լոս Անճելըսի մէջ ընթացող Հարաւային Քալիֆորնիայի համալսարանի Հայկական ուսումնասիրութիւններու ուսումնարանի «Հայաստանը վաղը քաղաքացիական դիւանագիտութիւնը գործողութեան մէջ» քննարկման:

Անդրադառնալով Հայաստանի վերջին ներքաղաքական զարգացումներուն՝ նախագահը բացառիկ էր հրաշալի որակած է խաղաղ ցոյցերով, սեփական տեսակէտներն ու համոզումները արտա-յայտելու միջոցով քաղաքական համակարգ փոխելու հնարաւորութիւնը Հայաստանի մէջ: «Կը կարծեմ իբրեւ հայեր պէտք է հպարտանանք այն ամէնով, ինչին հասանք 2018 Մարիլ-Մայիսին: Ի հարկէ, սակա կը ստեղծէ մեծ ակնկալիքներ ամբողջ աշխարհի մէջ, ոչ միայն երիտասարդ հայերու ծիրէն ներս: Բայց առաջին հերթին երիտասարդ հայերուն կը ստիպէ հաւատալ, որ իրենք են տէրը այս երկրի, ապագայի, արժէքներու եւ ժառանգութեան: Երկրորդն ալ շատ կարեւոր է քաղաքացի ըլլալու, ապագայի համար պատասխանատու ըլլալու զգացումը»,- ընդգծած է Արմէն Սարգսեան:

Նախագահը ըսած է, թէ երբ իրեն առաջարկեցին դառնալ նախագահ, ինքը կը մտածէր, որ ունի 7 տարի տարբեր քննարկումներու, մարդոց քաջալերելու միջոցով հասնելու այն բանին, որ մարդիկ իրենց քաղաքացի զգան ազատօրէն կարծիք արտայայտելու, սեփական հաւատալիքներու համար պայքարելու մղումով, որպէսզի ընտրութեան երթալու ժամանակ ըլլան ազնիւ ու պատասխանատու: Սակայն, ըստ նախագահի, 7 տարուան փոխարէն ատիկա տեղի ունեցաւ 7 օրուան մէջ:

Այս իմաստով Արմէն Սարգսեանը մեծապէս կարեւոր համարած է հայկական ներուժի օգտագործումն ու պահը չկորսնցնելը: «Հայաստանէն դուրս ապրող հայերէն շատերը շատ լաւ քաղաքացիներ են այն երկիրներուն մէջ, ուր կ'ապրին, անոնցմէ շատերը միջազգային հանրութեան կողմէ յարգուած ու ճանչցուած գիտնականներ, գործարարներ, քաղաքական գործիչներ են եւ այլն: Ժամանակն է, որ բոլորը գիտակցեն, որ Հայաստանն իրենց հայրենիքն է, իրենք այս պետութեանն են պատկանում: Այս առիթը օգտագործելով՝ վերակառուցենք մեր երկիրը յանուն ապագայ սերունդներուն»,- նշած է Արմէն Սարգսեան:

Ան ընդգծած է, որ հայ ազգը բաւականաչափ հասուն է իմաստուն է, որ օգտուի այս պատմական հնարաւորութենէն եւ որ ինքը լաւատես է: «Դուրը պէտք է բաց պահենք, որ իսկապէս բոլոր հայերը, որոնք կը կարծեն, որ հայրենիքին տալու բան ունին, հնարաւորութիւն ունենան իրենց գիտելիքը, ժամանակը, կարողութիւնը ներդնել այս երկրին մէջ: Եթէ մենք այդ հնարաւորութիւնը փախցնենք, ես շատ պիտի տխրիմ»,- եզրափակած է ՀՀ նախագահ Արմէն Սարգսեան:

Ամերիկահայ մարզիկ (POLO) Մթեֆանի Մութաֆեանի այցելությունը Հ.Բ.Ը.Միություն «Ա. Գալփաբեան» վարժարանը

Մայիս 10, 2018 առաջինը, Հ.Բ.Ը.Միության «Ա. Գալփաբեան» վարժարանի աշակերտները ուրախությամբ ունեցան մտնել ծանօթանալու, հայազգի POLO-ի ախույն Մթեֆանի Մութաֆեանին, որուն հետ առիթը ունեցան գրուցելու հարցումներ յղելու եւ տեղեկանալու այս իրադարձության համար:



Մթեֆանին՝ աշակերտներուն հետ նկարուցում, պատասխանեց իրենց հարցումներուն եւ պարտեցում դասարանները:



Այցելությունը աւարտին, տնօրէնուհի տիկ. Մարիլէնա Պէնարտի իրեն նուիրեց պատուոյ յուշատախտակ մը:



Մթեֆանի Մութաֆեան ծնած է Ամերիկայի Միացեալ Նահանգներ (Լոս Անճելըս) պոլսահայ ծնողքէ:

Ուրը տարեկանին սկսած է զբաղիլ լողալով:

Ուսումը ստացած է Գալիֆորնիոյ Berkley համալսարանը եւ մաս կազմած՝ Ամերիկայի POLO-ի հաւարական խումբին մէջ (United States Senior and Junior National Team):

Այս վերջին ամիսները Յունաստանի մէջ կը խաղայ «Եθνικός» խումբին համար: Լորանը եւ յարատեւ յաջողութիւններ կը մտադրէ Մթեֆանին:

ΕΠΙΣΚΕΨΗ ΤΗΣ ΑΘΛΗΤΡΙΑΣ ΤΗΣ ΥΔΑΤΟΣΦΑΙΡΙΣΗΣ «STEPHANIE MUTAFYAN» ΣΤΟ ΙΔ. ΣΧΟΛΕΙΟ ΤΗΣ ΓΕΝΙΚΗΣ ΑΡΜΕΝΙΚΗΣ ΕΝΩΣΗΣ ΑΓΑΘΟΕΡΓΙΑΣ «ΑΡΤΑΚΙ ΚΑΛΠΑΚΙΑΝ»

Οι μαθητές του Ιδιωτικού Σχολείου της Γενικής Αρμενικής Ένωσης Αγαθοεργίας «Αρτάκι Καλπακιάν» είχαν τη χαρά να γνωρίσουν από κοντά τη νεαρή Αρμένισσα πρωταθλήτρια της υδατοσφαίρισης (πόλο), Stephanie Mutafyan, την Πέμπτη 10 Μαΐου 2018 και να συζητήσουν μαζί της για το ξεχωριστό αυτό άθλημα.

Τα παιδιά έκαναν ερωτήσεις σχετικά με την πορεία της στο συγκεκριμένο σπορ και έβγαλαν μαζί της αναμνηστικές φωτογραφίες. Επιπλέον, στο πλαίσιο της επίσκεψής της στο Σχολείο, η αθλήτρια περιηγήθηκε στους χώρους διδασκαλίας, ενώ της απονεμήθηκε και τιμητική πλακέτα από τη Διευθύντρια του Σχολείου. Η Stephanie Mutafyan γεννήθηκε στο Λος Άντζελες της Αμερικής από γονείς Αρμένιους της Κωνσταντινούπολης. Από 8 ετών ασχολείται με την κολύμβηση, την οποία αρχικά ξεκίνησε ως χόμπι. Σπούδασε στο Πανεπιστήμιο Berkley της Καλιφόρνια, ενώ υπήρξε μέλος της εθνικής ομάδας πόλο της Αμερικής (United States Senior & Junior National Team).

Η καριέρα αυτής της πολλά υποσχόμενης αθλήτριας στην Ελλάδα ξεκίνησε στην ομάδα του «Εθνικού» και αναμένεται να δούμε τα επόμενα επαγγελματικά της βήματα.

Լոյս Տեսալ

Ուրախ եմ տեղեկացնելու, որ նոր գիրքս՝ Մփիւռքահայ Կեանքեր՝ Ինչպէս որ Տեսայ, լոյս տեսաւ Ապրիլ 2018-ին: Յոյսով եմ, որ շատերու համար այդ հետաքրքրական հրատարակութիւն մը



պիտի ըլլայ, որովհետեւ այդ աշխարհի ամենամեծ սփիւռքի համայնքներէն մեկուն մասին՝ ազգագրական շունչով գրուած, յօդուածներու շարք մը կը պարունակէ:

Գիրքը կը ներկայացնէ հայ անհատներու, ընտանիքներու, մշակութային եւ կրթական հաստատություններու ամենօրեայ կեանքը եւ անոնց պայքարը հայ լեզուի, մշակոյթի, եւ ինքնութեան պահպանման համար՝ Ատիս Ապապայի, Հալէպի, Թաիլանդի, Նիւ Եորքի, Մանթիակոյի, կամ Չիլիի մէջ:

Ըստ գիրքին խմբագիրին. «Դոկտ. Ճէպէճեանին՝ 2011-2017 թուականներուն գրուած յօդուածները, լուսագոյն վկան են անոր առողջ տեսլականին, բացառիկ երանդին, խիզախ վերլուծումներուն, հասուն մտածելակերպին եւ հաստատ հաւատքին անցեալ եօթ տարիներուն ընթացքին՝ միշտ առաջնակարգ դասելով հայուն փշոտ բայց անսակարկելի ինքնութեան գոյապայքարի ճանապարհը»:

Աւելի քան 100 լուսանկարներով, այս 550-էջանոց գիրքը վկայութիւն մըն է ազգի մը վերապրումին, գոյատեւման եւ զարգացումին հայ ժողովուրդին, որ 2018 թուականին կը տօնէ Հայաստանի Առաջին Հանրապետութեան 100 ամեակը եւ 20-րդ դարու առաջին Ցեղասպանութեան 103րդ ամեակը:

Ստանալու համար դիմել՝ Դոկտ. Հրայր Ճէպէճեանին- hrayrj@mtnmail.com.cy

Պ Տ Ո Յ Տ

Հունահայոց թեմի երիտասարդաց միությունը կը կազմակերպէ 10/06/2018 կիրակի մեկ օրյա պտույտ դէպի Մուրթ Թեոդորա (Αγία Θεοδώρα):

Առավոտյան 7.30 Կոնստինէնտալ Պանդոկ եւ 7.45 Մետրո Եզալեո:

Տեղ պահովելու զանգահարեք Արմինե 6937678062, Պետրոս 6987675444 :

Ամավերջի Հանդէս

Հայ Աւետարանական Մանկապարտէզի

Մերով կը հրաւիրենք Ձեզ, Հայ Աւետարանական Մանկապարտէզի Ամավերջի հանդէսին, որ տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի 6 Յունիս 2018, կ.է. ժամը 7-ին Հայ Աւետ. Եկեղեցւոյ ժողովարանին մէջ:

Եկեք սիրելիներ քաջալերենք եւ վայելենք մեր երեխաները եւ գնահատենք մեր ուսուցչական կազմը իրենց անխնայ, նուիրեալ եւ անսակարկ աշխատանքին համար:

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

AGBU

Հ.Բ.Ը.Մ. «Ա. ԳԱԼՓԱՔԵԱՆ» ՎԱՐՇԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆՐԷՍ



Հ.Բ.Ը.Մ.ի թիվ 13 Յունիս 2018, երեկոյան ժամը 7-ին, «Հրանդ և Լուիզ Ֆեներձեան» հանդիսարանին մէջ:
Միտով հրաւիրուած է յունահայ հասարակութիւնը:

Տնօրէնութիւն

**ΠΡΟΣΚΛΗΣΗ ΣΤΗΝ ΚΑΛΟΚΑΙΡΙΝΗ ΓΙΟΡΤΗ ΤΟΥ ΙΔΙΩΤΙΚΟΥ ΣΧΟΛΕΙΟΥ
Γ.Α.Ε.Α. «Α. ΚΑΛΠΑΚΙΑΝ»**

Με χαρά σας προσκαλούμε στην καλοκαιρινή γιορτή του Δημοτικού Σχολείου και Νηπιαγωγείου Γ.Α.Ε.Α. «Α. Καλπακιάν», που θα πραγματοποιηθεί την **Τετάρτη 13 Ιουνίου 2018** και ώρα 19.00 μ.μ., στην αίθουσα εκδηλώσεων «Χράντ και Λουίζ Φενερτζιάν». Η παρουσία σας θα αποτελέσει για εμάς ιδιαίτερη τιμή.
Εκ της Διευθύνσεως



ΜΑΣΣΙΣ ΠΟΔΟΣΦΑΙΡΙΚΗ ΟΜΑΔΑ

AGBU

Αγαπητοί μας αναγνώστες,

Το σημερινό μας κείμενο είναι λίγο διαφορετικό σε σχέση με τα προηγούμενα που σας έχουμε γράψει. Σχετίζεται με το ταξίδι μας στην Κύπρο! Ένα ταξίδι με ιστορική αναδρομή, νοσταλγία, πολύ ένταση και διάφορα επιπλέον συναισθήματα. Είδαμε αγαπητά μας πρόσωπα, φίλους-αδερφούς, που διανύσαμε μαζί τα γλυκά χρόνια της εφηβείας, κτίζοντας σταδιακά τον χαρακτήρα και την προσωπικότητά μας. Και με μεγάλη χαρά ξαναγίναμε τα παιδιά που ήμασταν τότε, παίζοντας μαζί τους στο ποδοσφαιρικό τουρνουά που διοργανώσαμε.

Καταλαβαίνετε ότι για αυτό το ταξίδι υπήρχε ένας κοινός παρανομαστής και αυτός ήταν το σχολείο μας. Ένα σχολείο που είναι ιερό οικοδόμημα στις καρδιές μας και για την υπόλοιπη ζωή μας, στο οποίο μεγαλώνοντας συνδεθήκαμε με δεσμούς ιερούς με τους φίλους μας αλλά και όχι μόνο, αλλά και με την πατρίδα μας, μαθαίνοντας να μην ντρεπόμαστε για αυτό που είμαστε, αλλά να είμαστε μόνο περήφανοι και να αγωνιζόμαστε για αυτό, είτε άμεσα, είτε έμμεσα. Το σχολείο αυτό είναι το ΜΕΛΚΟΝΙΑΝ, ένα σχολείο που έχει προσφέρει παρά πολλά σε εμάς, αλλά δυστυχώς έχει εισπράξει λίγα από μας.

Το ταξίδι μας ξεκίνησε την Παρασκευή, όπου και φύγαμε από το Ελευθέριος Βενιζέλος με προορισμό την Λάρνακα. Όταν φτάσαμε και μετά από λίγο ελεύθερο χρόνο, μας υποδεχθήκανε αγαπητά πρόσωπα και περάσαμε χρόνο αξέχαστο.

Το Σάββατο όμως μετά από κάποια ώρα η ομάδα ξεκίνησε με κατεύθυνση το μνημείο της Αρμενικής Γενοκτονίας στην Λευκωσία και έκανε κατάθεση στεφάνου στην μνήμη των αδικοχαμένων Αρμενίων, από παίκτες της ποδοσφαιρικής ομάδας ΜΑΣΣΙΣ, κ.κ. ΣΟΥΡΕΝ ΧΑΡΟΥΤΟΥΝΙΑΝ και ΑΡΜΕΝ ΟΒΑΝΕΣΙΑΝ. Στην συνέχεια πήγαμε προς το ΜΕΛΚΟΝΙΑΝ. Και εκεί σύσσωμη η ομάδα κατέθεσε φόρο τιμής στους Αρμένιους ευεργέτες ΑΔΕΛΦΟΥΣ ΚΡΙΚΟΡ ΚΑΙ ΓΚΑΡΑΜΠΙΕΤ ΜΕΛΚΟΝΙΑΝ παρέα με άλλους φίλους. Μετά το πέρας της ώρας και εφόσον τα μέλη της ομάδας μας ξενάγησαν στον περιβάλλοντα χώρο του σχολείου και ακούγοντας διάφορες ιστορίες από τα παλιά, ανηφορίσαμε προς το κλειστό γήπεδο του ΜΕΛΚΟΝΙΑΝ. Είχε έρθει η ώρα για τους αγώνες.

Οι ομάδες που συμμετείχαν ήταν ΜΑΣΣΙΣ, ΑΡΑΡΑΔ VETERANS, AGBU ԿՐ NICOSIA και CLASS OF 2000. Νικητές του τουρνουά ήταν η CLASS OF 2000 και δεν ήταν τυχαίο άλλωστε, γιατί μετά από 17 χρόνια η δύναμη της αγάπης για την τάξη αποφοίτων του 2000, για την τάξη τους που είχαν ακόμα κράταγε και δεν είχε λυγίσει και με περίσσιο πάθος και λυσσαλέα μάχη, πάλεψαν να φέρουν την ομάδα της τάξης τους στην κορυφή. Το βράδυ ήμασταν καλεσμένοι της Διοίκησης του AGBU Λευκωσίας, όπου περάσαμε χρόνο μαζί, θυμούμενοι τα παλιά και εμείς εκ μέρους της ομάδας μας τους δώσαμε αναμνηστικά δώρα, στον Πρόεδρο κ. Μισάκ Κουγιουμτζιάν από τον Χαμπίκ Αγαζαριάν και από την νεολαία παρέλαβε το αναμνηστικό ο Αρμέν Ντεμιρτζιάν, από τον Λεβόν Αγαζαριάν και τους ευχαριστούμε θερμά για την φιλοξενία και επιφυλασσόμαστε περιμένοντάς τους στην ΕΛΛΑΔΑ, την επόμενη χρονιά όπως και συμφωνήσαμε. Τα αποτελέσματα της ομάδας μας στο τουρνουά είναι MASSIS vs CLASS OF 2000 3-5, MASSIS vs AGBU ԿՐ 4-1 MASSIS vs ΑΡΑΡΑΔ VETERANS 3-4. Ένα μεγάλο ευχαριστώ σε όλα τα άτομα και στο Σωματείο μας την ΓΕΝΙΚΗ ΑΡΜΕΝΙΚΗ ΕΝΩΣΗ ΑΓΑΘΟΕΡΓΙΑΣ που μας βοήθησαν να κάνουμε αυτό το ταξίδι και να θυμηθούμε το τι έχει προσφέρει το ΜΕΛΚΟΝΙΑΝ όλα αυτά τα χρόνια.

Και ένα ερώτημα που θα μείνει πάντα αναπάντητο είναι το τι θα μπορούσε να προσφέρει στο μέλλον ...



AGBU

Նուիրատուութիւն

Տիկ. Զապէլ Փափազեան
500 երրո կը նուիրէ
Հ.Բ.Ը.Մ.ի թիվ 13 «Ա. Գալփաքեան» վարժարանին:

ՆՈՐ ԱՇԽԱՐՀ
ԱԶԳԱՅԻՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ.
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Սեփականութիւն
ԱՐԱՐԱՏ Մ Ս ՄԻՈՒԹԻՒՆ
Միւրթի 33, Նիքեա, Յունաստան

Համակարգչային
շարուածքը և էջադրուիւր՝
ՆՈՐ ԱՇԽԱՐՀ շարաթարթերթի

Տնօրէն՝
Ընկ. Սարգիս Խաչատուրեան

Սրտոնատեր -
Փաստաբան՝
ընկ. Յակոբ Տէւաճեան

“ՈՐ ԱՇԽԱՐ”
Արմենիկ Եօդուածաւի
Էփեմերիտ
Իտուկտիտիտ “ԱՐԱՐԱՏ”
Փիլուլուլուլու Աթլետիկ Տուուատիտ

Ըւիտուտիտ
Տարկիտ Խատտուրիտ
Էկտտիտ -
Իտուկտիտ Փեւտիտ Ըկեղուլու

Տիտուտ 33 - ՏԻ 18450 - Նիկեա
Տիլ: 210-4926085
“ՈՐ ԱՇԽԱՐ”
Armenian Cultural Social Weekly

33 Sistou Str.
GR 18450 NIKEA GREECE
Tel-Fax: 00+30+210-4926085

Բարի իմքարականներէ, յղուտաղիւրներու տեսիլտուներն ու գաղափարներն անաղաւանտորէն շէն արտաղաղտեր թերթին ուղեղիտը:



ΔΗΜΟΣ Π.ΦΑΛΗΡΟΥ
ΔΗΜΟΤΙΚΕΣ ΒΙΒΛΙΟΘΗΚΕΣ Π.ΦΑΛΗΡΟΥ



Ο Δήμαρχος Π.Φαλήρου Διονύσης Χατζηδάκης, η «ΑΡΑΡΑΤ ΕΛΛΗΝΟΑΡΜΕΝΙΚΗ ΦΙΛΟΛΟΓΙΚΗ ΑΘΛΗΤΙΚΗ ΕΝΩΣΗ» και η Αντιδήμαρχος Περιβάλλοντος και Υπεύθυνη Δημοτικών Βιβλιοθηκών Π.Φαλήρου Βίκυ Ανδρικοπούλου, σας προσκαλούν στην αρμένικη θεατρική παράσταση με τίτλο «Υπηρετής δύο αφεντάδων» σε σκηνοθεσία Χάικ Κασαρτζιάν (ελληνική απόδοση)



Την Πέμπτη 31 Μαΐου, 2018
& ώρα 20:00
Στον ΠΟΛΥΧΩΡΟ του Δημαρχείου Π.Φαλήρου
(Τερψιχόρης 51 & Αρτέμιδος)

Յիշէ...Յարգէ...Պայքարէ...Պահանջէ

Յարգելի Հայրենակից

Հայ ազգի ոչնչացման՝ ճգնաժամային ցեղասպանութենէն եւ տաժանակիր տառապանքի թշուառութիւններէն, 103 տարիներ անցած են:
Վերքը կը մնայ անունջ եւ անմոռանալի:

Հայոց ցեղասպանութենէն ետք, երեք տարիներու իրարյաջորդ քաղաքական տխուր եղելութիւններուն, կը յաջորդէ Սարտարապատի դիցազնամարտի յաղթանակը, որուն շնորհիւ կը կերտուի Ազատ Անկախ Հայաստանի առաջին պետականութեան հռչակումը, որմէ արդէն անցած են հարիւր տարիներ:

Յունաստանի Ռ.Ա.Կուսակցութեան Հայ Իրաւանց Խորհուրդը՝ կը նախաձեռնէ, հովանաւորութեամբ Յունահայոց Թեմական Խորհուրդին, Կիրակի 3 Յունիս 2018-ի առաւօտեան ժամը 10.30ին,

Աթենքի «GLORIA» թատրոնին մէջ **ΙΠΠΟΚΡΑΤΟΥΣ 7** και **ΠΑΝΕΠΙΣΤΗΜΙΟΥ**

-Ոգեկոչել՝ 24 Ապրիլ 1915-ի Հայոց Ցեղասպանութիւնը

-Փառաբանել՝ 22-26 Մայիս 1918 Սարտարապատի յաղթանակը կերտող հերոսներու յիշատակի եւ

-Յիշատակել՝ 28 Մայիս 1918ի, Հայաստանի ազատ անկախ հռչակման՝ առաջին հանրապետութեան 100 ամեակը:

Օրուան խորհուրդը յարգելի ներկաներուն կը հաղորդէ յունարէն լեզուով, Յոյն հանրաժանօթ քաղաքագէտ, Յունաստանի նախկին արդարութեան նախարար եւ ներքին գործոց նախարար՝

ΧΑΡΑΛΑΜΠΟΣ ΚΑΣΤΑΝΙΔΗΣ

Որ իր հռետորական ոգետրիչ շունչով՝ միշտ ներշնչած է իր ունկնդիրները:

Ուխտի Օր է՝ Մասնակցէ՝ Յիշէ՝ Յարգէ՝ Պայքարէ՝ Պահանջէ

Այս առիթով առաւօտեան ժամը 10.00 նախկին Արմինիա ճաշարանէն եւ ժամը 10.20 Intercontinental պանդոկէն հանրակարգ պիտի մեկնի դէպի թատրոն: Կը խնդրուի ճշգրտապահ ըլլալ: